

**ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ  
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

**«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Պ-853-31.05.2024-ՊԻ-011/0) վերաբերյալ**

Ազգային ժողովի պատգամավոր Սիսակ Գաբրիելյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծն (փաստաթղթային կոդ՝ Պ-853-31.05.2024-ՊԻ-011/0) (այսուհետ՝ Նախագիծ) մասնագիտական փորձաքննության է ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագիծը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

## Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը (այսուհետ նաև՝ Սահմանադրություն) և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. Նախագծի 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) լրացվող նոր՝ 17.1-ին գլխում ներառված 288.2-րդ հոդվածի 1-ին մասում «ՀՀ-ում» հապավումն առաջարկում ենք փոխարինել «Հայաստանի Հանրապետությունում» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված կանոնը, այն է. *«Արգելվում են նորմատիվ իրավական ակտում կատարել բառերի կամ տերմինների անհարկի կրճատումներ, ինչպես նաև բառերի կամ տերմինների հապավումներ»:*

2. Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 17.1-ին գլխում ներառված 288.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. *«2. Առանձին խումբ անշարժ գույքի՝ ցանկացած եղանակով սեփականատիրոջ փոփոխության հանգեցնող գործարքի կնքումից առնվազն երեք ամիս առաջ սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ գործարքին համաձայնություն տալու մասին ակտի նախագիծը դրվում է հանրային քննարկման՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից վարվող իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում՝ պետական գույքի կառավարման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության միջոցով»:*

Վերոնշյալ իրավակարգավորման վերաբերյալ հարկ ենք համարում նշել հետևյալը.

Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 17.1-ին գլխում ներառված 288.3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված նորմը նախատեսում է առանձին խումբ անշարժ գույքի՝ ցանկացած եղանակով սեփականատիրոջ փոփոխության հանգեցնող գործարքին համաձայնություն տալու մասին ակտի նախագիծը հանրային քննարկման դնելու պահանջ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետում սահմանված է «հանրային քննարկում» հասկացությունը, այն է. *«հանրային քննարկում՝* իրավաստեղծ գործընթացին *հասարակության մասնակցության, գործընթացի թափանցիկության և հաշվետվողականության ապահովման նպատակով սույն օրենքով*

*սահմանված նորմատիվ իրավական ակտի նախագծի վերաբերյալ հանրության իրազեկման, ինչպես նաև հանրային կարծիքը բացահայտելու, դրանց վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ստանալու և դրանք ամփոփելու գործընթաց»:*

Մեջբերված հասկացությունից բխում է, որ հանրային քննարկման ենթակա են միայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով սահմանված նորմատիվ իրավական ակտերի նախագծերը: Մասնավորապես՝ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքով սահմանված նորմատիվ իրավական ակտերը Հայաստանի Հանրապետության ժողովրդի, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց ընդունած գրավոր իրավական ակտերն են, որոնք պարունակում են վարքագծի պարտադիր կանոններ անորոշ թվով անձանց համար:

Բացի այդ, հանրային քննարկման հասկացությամբ որպես հանրային քննարկման նպատակ նախատեսված է իրավաստեղծ գործընթացին հասարակության մասնակցությունը: Իրավաստեղծ գործընթացը հանրային իրավասու մարմինների իրավական գործունեությունն է՝ ուղղված իրավական ակտերի ընդունմանը, լրացմանը, փոփոխմանը և վերացմանը, որի արդյունքում օրենսդրությամբ սահմանված կարգով իրավական ակտերում ամրագրվում են իրավական նորմեր: Նշված իրավական նորմերը, պայմանավորված հասարակական հարաբերությունների կարգավորման առարկայով, ամրագրվում են համապատասխան օրենսդրության ճյուղին պատկանող իրավական ակտերով:

Այսպես՝ Նախագծում սահմանված առանձին խումբ անշարժ գույքի՝ ցանկացած եղանակով սեփականատիրոջ փոփոխության հանգեցնող գործարքին համաձայնություն տալու մասին ակտը չի համարվում նորմատիվ իրավական ակտ, և որևէ ձևով չի առնչվում իրավաստեղծ գործընթացին: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ նշենք, որ Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 17.1-ին գլխում ներառված 288.3-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված նորմը չի համապատասխանում օրենսդրությամբ սահմանված հանրային քննարկման վերաբերյալ իրավակարգավորումներին:

Նույն դիտարկումը վերաբերելի է նաև Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 17.1-ին գլխում ներառված 288.6-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված նորմին:

3. Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 17.1-ին գլխում ներառված 288.4-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «*Առանձին խումբ անշարժ գույքի*

սեփականատերը պարտավոր է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը ցանկացած երրորդ անձի հատուցմամբ օտարելու մտադրության մասին գրավոր տեղեկացնել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս պետական գույքի կառավարման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության: Գրավոր ծանուցման մեջ նշվում են գույքի օտարման առաջարկվող գինը և այլ պայմանները, իսկ ծանուցմանը կից ներկայացվում է «Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված առնվազն երեք գնահատման հաշվետվություն: Նախարարությունը ծանուցումը ստանալուց հետո՝ վեց ամսվա ընթացքում ընդունում կամ մերժում է ձեռքբերման առաջարկը՝ այդ մասին գրավոր ծանուցելով սեփականատիրոջը: Եթե պետությունը հրաժարվում է ձեռք բերել գույքը, ապա սեփականատերն իրավունք ունի գույքը հատուցմամբ օտարել այլ անձի՝ պայմանով, որ փաստացի օտարման գինը պակաս չէ պետությանն առաջարկված գնից, իսկ պայմանագրի այլ պայմանները համապատասխանում են պետությանն առաջարկված պայմաններին»:

Նշված իրավադրույթից բխում է, որ Հայաստանի Հանրապետության կողմից առանձին խումբ անշարժ գույքը ձեռք բերելու վերաբերյալ առաջարկը մերժվելու դեպքում սեփականատերն իրավունք է ստանում գույքը հատուցմամբ օտարել այլ անձի: Սակայն առանձին խումբ անշարժ գույքը հատուցմամբ այլ անձի օտարման դեպքում գործարքին մասնակից պետական մարմիններին(օրինակ՝ Կադաստրի կոմիտե)՝ նման գույքի օտարման մտադրության մասին պետության ծանուցված լինելու հանգամանքի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման ընթացակարգային իրավակարգավորումները բացակայում են: Մասնավորապես՝ Նախագծով սահմանված վերոնշյալ նորմերի պայմաններում անշարժ գույքի օտարման գործարքին մասնակից պետական մարմիններն իրենց գործառույթները իրականացնելիս պարտավորվում են ցանկացած դեպքում, երբ սեփականտերը ոչ առևտրային կազմակերպություն է և օտարվող անշարժ գույքը ընդգրկված է առանձին խումբ անշարժ գույքի Կառավարության կողմից սահմանվող ցանկում, հարցում կատարել պետական գույքի կառավարման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությանը՝ պարզելու արդյոք Հայաստանի Հանրապետությունը ծանուցվել և հրաժարվել է գույքը ձեռք բերելուց, ինչպես նաև ստուգել պայմանագրում սահմանվող փաստացի օտարման գնի և օտարման պայմանների ու պետությանը առաջարկված գնի և պայմանների նույնությունը: Հետևաբար առաջարկում ենք Նախագծում նախատեսել նաև առանձին խումբ անշարժ

գույքի օտարման գործարքի պարտադիր մասնակից պետական մարմինների իրազեկվածությունն ապահովող ընթացակարգային իրավակարգավումներ:

4. Նախագծի 1-ին հոդվածով Օրենսգրքում լրացվող նոր՝ 17.1-ին գլխում ներառված 288.4-րդ հոդվածի 6-րդ մասում Կառավարությանը վերապահվում է գնման առաջարկի քննարկման կարգը սահմանելու իրավագործություն: Մինչդեռ Նախագծի անցումային դրուժներում բացակայում է գնման առաջարկի քննարկման կարգի ընդունման նախատեսվող ժամկետի մասին նշումը: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. *«Եթե օրենսդրական ակտով (բացառությամբ Սահմանադրության) սահմանված նորմը կարող է կատարվել միայն այդ ակտով նախատեսված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, կամ դրա կատարումն ուղղակիորեն պայմանավորված է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունմամբ, ապա օրենսդրական ակտի անցումային դրուժներով սահմանվում են նաև՝*

*1) օրենսդրական ակտի այն մասերը, որոնք գործելու են ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից.*

*2) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի ընդունման նախատեսվող ժամկետը»:*

Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Նախագծի անումային դրուժներում սահմանել նաև գնի առաջարկի քննարկման կարգի ընդունման նախատեսվող ժամկետը:

5. Նախագծի 2-րդ հոդվածի վերնագիրն առաջարկում ենք հանել՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասում սահմանված կանոնը, որի համաձայն. *«Օրենսդրական ակտի հոդվածները ունենում են վերնագրեր, բացառությամբ փոփոխություն կամ լրացում նախատեսող օրենսդրական ակտերի»:*

### ***Եզրահանգում***

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծով սահմանված կարգավորումներում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության տեսանկյունից խնդրահարույց նորմեր առկա չեն:

Միաժամանակ, ներկայացված առաջարկությունների հիման վրա, անհրաժեշտ է ապահովել Նախագծով սահմանված իրավակարգավորումների ամբողջականությունը,

ինչպես նաև համապատասխանությունը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ՋԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍՍՈՓՅԱՆ

Կատարող՝ Ն.Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248)

19.06.2024թ.

### **ՏԵՂԵԿԱՆՔ**

**Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին**

Նախագծին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ՋԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍՍՈՓՅԱՆ

Կատարող՝ Ն.Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248)

19.06.2024թ.

### **Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները**

Նախագծով նախատեսվում է ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը լրացնել նոր 17.1 գլխով, որը նվիրված կլինի որոշակի չափանիշներին համապատասխանող և Կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված գույքերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների փոխանցման

առանձնահատկություններին: Ներկայացվում են այն չափանիշները, որոնց բավարարող գույքը կարող է ներառվել Կառավարության կողմից սահմանվող ցանկում և ենթարկվել իրավունքների փոխանցման առանձնահատկությունների վերաբերյալ կարգավորումներին: Այդպիսին է համարվում այն անշարժ գույքը, որի նկատմամբ գույքային իրավունքները պատկանել են ՀԽՍՀ հասարակական կազմակերպությանը և որի նկատմամբ գրանցվել է ՀՀ-ում ստեղծված ոչ առևտրային կազմակերպության սեփականության իրավունքը: Նախագծով առաջարկվել են ընդհանուր և հատուկ կանոններ՝ տարանջատելով անշարժ գույքի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների հատուցելի կամ անհատույց փոխանցման, ինչպես նաև գրավադրման դեպքերը: Որպես ընդհանուր կանոն՝ անշարժ գույքի հատուցելի կամ անհատույց հիմունքներով սեփականատիրոջ փոփոխությանը հանգեցնող գործարքների կնքման համար նախատեսվել է պայման, այն է՝ տվյալ իրավաբանական անձի կառավարման բարձրագույն մարմնի անդամների 2/3-ի համաձայնության առկայությունը: Որպես հատուկ կարգավորում՝ գույքի հատուցելի օտարման դեպքում նախատեսվել է պետության գնման նախապատվության իրավունքը:

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրներ չի պարունակում:

Նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

### **Եզրահանգում**

Նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք չունի:

**ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ**

**ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ**

**ՓՈՐՉԱԲՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ**

**ԱՐԹՈՒՐ ԹԱՍԱԶՅԱՆ**

կատարող՝ գլխավոր մասնագետ Գ. Կիրակոսյան

(հեռ.՝ 011 513-603)

06.06.2024թ.

## *Մոցիալական փորձաքննության արդյունքները*

Ներկայացված նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է լրացումներ կատարել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք):

Նախագծով առաջարկվում է Օրենսգիրքը լրացնել նոր 17.1 գլխով, որը նվիրված կլինի որոշակի չափանիշներին համապատասխանող և Կառավարության կողմից սահմանված ցանկում ներառված գույքերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների փոխանցման առանձնահատկություններին:

Առաջարկվել է նախատեսել այն չափանիշները, որոնց բավարարող գույքը կարող է ներառվել Կառավարության կողմից սահմանվող ցանկում և ենթարկվել իրավունքների փոխանցման առանձնահատկությունների վերաբերյալ կարգավորումներին: Այդպիսին է համարվում այն անշարժ գույքը, որի նկատմամբ գույքային իրավունքները պատկանել են ՀԽՍՀ հասարակական կազմակերպությանը և որի նկատմամբ գրանցվել է ՀՀ-ում ստեղծված ոչ առևտրային կազմակերպության սեփականության իրավունքը: Առաջարկվել է սահմանել ընդհանուր և հատուկ կանոններ՝ տարանջատելով անշարժ գույքի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքների հատուցելի կամ անհատույց փոխանցման, ինչպես նաև գրավադրման դեպքերը:

Մասնավորապես,

- որպես ընդհանուր կանոն՝ անշարժ գույքի հատուցելի կամ անհատույց հիմունքներով սեփականատիրոջ փոփոխությանը հանգեցնող գործարքների կնքման համար նախատեսվել է պայման, այն է՝ տվյալ իրավաբանական անձի կառավարման բարձրագույն մարմնի անդամների 2/3-ի համաձայնության առկայությունը.

- որպես հատուկ կարգավորում՝ գույքի հատուցելի օտարման դեպքում նախատեսվել է պետության գնման նախապատվության իրավունքը.

- որպես հատուկ կարգավորում՝ առանձին խումբ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի անհատույց փոխանցման հնարավորությունը նախատեսվել է բացառապես ոչ առևտրային կազմակերպություններին, պետությանն ու համայնքներին նվիրաբերության կարգով փոխանցելու դեպքում:

Անշարժ գույքի նկատմամբ այլ գույքային իրավունքները հատուցմամբ կամ անհատույց փոխանցելու վերաբերյալ գործարքի կնքման համար նախատեսվել է պայման,



այն է՝ տվյալ իրավաբանական անձի կառավարման բարձրագույն մարմնի անդամների 2/3-ի համաձայնության առկայությունը և գործարքի կնքումից առնվազն երեք ամիս առաջ գործարքին համաձայնություն տալու մասին ակտի նախագիծը:

Նախագծով առաջարկվել է սահմանել գույքը միայն հոգուտ պետության կամ համայնքի գրավ դնելու սեփականատիրոջ իրավունքը, ինչպես նաև առանձին խումբ անշարժ գույքի գրավադրման գործարքը միայն տվյալ իրավաբանական անձի կառավարման բարձրագույն մարմնի անդամների 2/3-ի համաձայնության առկայության դեպքում կնքելու կանոն՝ գույքը գրավ դնելու և դրա հետևանքով սեփականության իրավունքից զրկվելու դեպքերը բացառելու նպատակով, ինչպես նաև սահմանել լրացվող գլխով նախատեսվող սեփականության և այլ գույքային իրավունքների փոխանցման պահանջների չպահպանման հետևանքը՝ այն կապելով գործարքի առաջնության հետ:

Նախագծի ընդունմամբ ակնկալվում է, որ պետության և հասարակության համար կապահովվի մշակութային, պատմական, գեղարվեստական, գեղագիտական կամ այլ արժեքավոր նշանակություն ունեցող որոշ խումբ գույքերի՝ այլ նպատակներով օգտագործման, տիրապետման դեպքերի նվազեցումը:

Չնայած այն հանգամանքին, որ Նախագիծը սոցիալ, կրթական և առողջապահական հիմնախնդիրներ չի պարունակում, այդուհանդերձ կցանկանայինք ներկայացնել հետևյալ առաջարկությունը.

Օրենսգրքի նոր լրացվելիք 288.4 հոդվածի 2-րդ մասում նշվում է, որ՝ «Առանձին խումբ անշարժ գույքի սեփականատերը պարտավոր է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը ցանկացած երրորդ անձի հատուցմամբ օտարելու մտադրության մասին գրավոր տեղեկացնել Հայաստանի Հանրապետությանը՝ ի դեմս պետական գույքի կառավարման ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարության: Գրավոր ծանուցման մեջ նշվում են գույքի օտարման առաջարկվող գինը և այլ պայմաններ, իսկ ծանուցմանը կից ներկայացվում է «Գնահատման գործունեության մասին» օրենքով սահմանված առնվազն երեք գնահատման հաշվետվություն»:

Եթե խոսքը գնում է առնվազն երեք տարբեր գնահատման կազմակերպությունների կողմից տրվելիք/իրականացվելիք գնահատման հաշվետվությունների մասին, առաջարկում ենք ձևակերպումը հստակեցնել և նշել՝ «առնվազն երեք գնահատման կազմակերպության կողմից իրականացված գնահատման հաշվետվություններ»:

## Եզրահանգում

Նախագիծը սոցիալ, կրթական, առողջապահական հիմնահարցերի տեսանկյունից  
լրամշակման կարիք չունի:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՓՈՐՁԱԶՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝

ԼԻԼԻԹ ՍԱՐԿՈՍՅԱՆ

Հեռ. /011/ 513 235 ներք. /1618/

18.06.2024թ.